ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

"Արմինկո" ՍՊ ընկերության կողմից բաժանորդային սկզբունքով հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ

N V-00280 / 060275002 ք. Երևան "12" 01 2015թ.

"ԱՐՄԻՆԿՈ" ՍՊԸ-ն, այսուհետ՝ ԱՐՄԻՆԿՈ, ի դեմս տնօրեն ***Արման Ներսիսյանի,*** որը գործում է ԱՐՄԻՆԿՈ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ***ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմը,*** ի դեմս աշխատակազմի ղեկավարի ***Հ.Աբրահամյանի*** այսուհետ՝ ԲԱԺԱՆՈՐԴ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. ԱՐՄԻՆԿՈՆ մատուցում է ԲԱԺԱՆՈՐԴ-ին հեռահաղորդակցության-տեղեկատվական ծառայություններ, հետագայում՝ ծառայություններ:

2. Պայմաններ և սահմանումներ

2.1. Պայմանագիրը ստորագրելուց հետո քսանչորս ժամվա ընթացքում ԱՐՄԻՆԿՈՆ հատկացնում է ԲԱԺԱՆՈՐԴ-ին

-մուտքաբառ և գաղտնաբառ, ԱՐՄԻՆԿՈ-ի SIP արձանագրությամբ գործող ԱՀԿ-ի հասցեն, որոնց օգտագործմամբ ԲԺԱՆՈՐԴԸ ինքնուրույն կարգաբերում է SIP արձանագրությունը սատարող իր կողմից տնօրինվող կոմունիկացիոն սարքը:

-Մուտքաբառ և գաղտնաբառ, որոնց օգտագործմամբ ԲԱԺԱՆՈՐԴԸ հասանելություն է ստանում http://sip.arminco.com/060profile/ կայքի իր անձնական առանձնասենակը՝ իր կողմց կատարված և իր հեռախոսահամարի վրա արված զանների վերաբերյալ տեղեկատվության ստանալու համար :

2.2. ԱՐՄԻՆԿՈՆ իրավունք ունի փոփոխել ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ՝ տեղեկացնելով ԲԱԺԱՆՈՐԴ-ին փոփոխությունից առնվազն 30 օր առաջ եւ ներկայացնելով ծառայության վարձի փոփոխման հիմնավորում:

3. Գները և վճարումները

3.1. ԲԱԺԱՆՈՐԴ-ը վճարում է ԱՐՄԻՆԿՈՒՆ ծառայությունների համար համաձայն սույն պայմանագրի հավելվածի, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. ԱՐՄԻՆԿՈՆ իրավունք ունի փոփոխել սույն պայմանագրի հավելվածում նշված գները՝ այդ մասին տեղեկացնելով ԲԱԺԱՆՈՐԴ-ին փոփոխությունից առնվազն 30 օր առաջ:

3.3. Վճարումները իրականացվում են հետվճարային եղանակով: Հաշիվները տրամադրվում են ԲԱԺԱՆՈՐԴ-ին ամեն ամիս Բաժանորդին տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով, բնօրինակն ուղղվում են փոստային ծառայության միջոցով: ԲԱԺԱՆՈՐԴ-ը վճարում է կատարում պայմանագրի հավելվածում նշված ծառայությունների համար՝ հաշիվը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում: Եթե վճարումները չեն կատարվում 10 օրվա ընթացքում, ԱՐՄԻՆԿՈՆ իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը առանց նախազգուշացման: ԲԱԺԱՆՈՐԴԻՆ միացման համար վճարվող գումարը վճարվում է միանվագ, վերադարձման ենթակա չէ:

3.4. Բոլոր հաշվարկները եւ վճարումները կատարում են ՀՀ դրամով:

4. Պատասխանատվություն

4.1. Եթե ԲԱԺԱՆՈՐԴ-ը խախտել է սույն պայմանագրի պայմանները, ԱՐՄԻՆԿՈՆ իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը:

4.2. ԱՐՄԻՆԿՈՆ պատասխանատու չէ երրորդ կողմի պատճառով առաջացած ուշացումների կամ կապի խզման դեպքերի, ծառայության խախտումների համար, որոնք առաջացել են ԲԱԺԱՆՈՐԴ-ի սարքավորման անսարքության պատճառով, գործադուլների, փոթորիկների, հրդեհների, հրաբուխների, պետական պատասխանատու մարմինների գործունեության պատճառով, քաղաքացիական պատերազմների կամ ապստամբությունների դեպքերի պատճառով, այլ դեպքերի համար, որոնք չեն գտնվում ԱՐՄԻՆԿՈՒՆ հսկողության տակ: Սա պարունակում է, բայց չի սահմանափակված այն համակարգերով կամ ցանցերով, որոնք չեն պատկանում կամ ղեկավարվում ԱՐՄԻՆԿՈՒՆ կամ նրա մասնաճյուղերի կողմից, որևէ անձի /անձանց/ ոճրագործ արարքների համար որևէ երկրում կամ երկրներում:

4.3. ԱՐՄԻՆԿՈՆ պատասխանատվություն չի կրում ԲԱԺԱՆՈՐԴ-ի կոմունիկացիոն սարքի տվյալների կորստի համար, ԲԱԺԱՆՈՐԴ-ի հեռախոսասարք ոչ թույլատրված մուտքի համար, որը պայմանավորված է եղել ինչ-որ ճանապարհով տարածված համակարգչային վնասակար ծրագրի գործունեության պատճառով:

4.4. ԱՐՄԻՆԿՈՆ ներկայացնում է ԲԱԺԱՆՈՐԴԻ օգտագործված ծավալների մասին վերծանումները http://sip.arminco.com/060profile/ էջում՝ ԲԱԺԱՆՈՐԴԻ անձնական առանձնասենյալում:

4.5. ԲԱԺԱՆՈՐԴԸ իրավունք չունի իրեն տրամադրված հեռախոսահամարի միջոցով ինքնուրույն կամ երրորդ անձանց միջոցով մատուցել հատուցվող հեռահաղորդակցության ծառայություններ:

4.6. ԲԱԺԱՆՈՐԴԻ կողմից տնօրինվող կոմունկացիոն սարքի աշխատունակության համար ԱՐՄԻՆԿՈՆ պատասխանատվություն չի կրում, նշված սարքի կարգաբերումը, սպասարկումը, վերազինումը գտնվում է ԲԱԺԱՆՈՐԴԻ պատասխանատվության տակ:

5. Վեճերի կարգավորում և օրենք

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը, իրականացվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Գաղտնապահություն

6.1. ԲԱԺԱՆՈՐԴ-ի կողմից ուղարկված և ստացված ամբողջ լրատվությունը մասնավոր է և գաղտնի, այն ենթակա չէ հրապարակման: ԱՐՄԻՆԿՈՆ ի վիճակի չէ ապահովել գաղտնիության ավելի բարձր աստիճան, հեռահաղորդակցության ցանցերում օգտագործվող ընդունված գաղտնիությունից:

7. Վեճերի կարգավորում և օրենք

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր դատարանների ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի Հանրապետության Առևտրաարդյունաբերական պալատին (ԱԱՊ) կից մշտապես գործող արբիտրաժային հաստատությանը՝ համաձայն վերջինիս կանոնակարգի՝ երեք արբիտրների կազմով, դատավարության լեզուն՝ հայերեն, արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան: Վեճը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն: